67. ԱԽՔԱ՛ԴԸ ՀԱՋԻ ՏԸԵՌԱՎ

Էրկու հարուստ թուրք քյինձմ ըն, վըեր հաջի տըեռնան։ Մին քյասիբ թուրք նհըտնեն ա ինգյում, ասում.—Ես էլ ըմ օղում ծըղ-նըհետ կյամ։ Տահանք հրցընում ըն, թա փող օնե՞ս, տա թա՝ չէ՛, օղում ըմ ծըեղ բութա անեմ, կյամ։ Տահանք ասում ըն՝ մզնըհետ կյամիլ, տա զոռավ նհըտնեն ա ինգյում, քյինձմ։ Հղեննի քյինձլիս երգյինքյան մին շոխկ ա վըեր կյամ, տահանց կլխավը սմըին ընելավ քյինամ։ Էտ մարթն ասում ա.—Էն շոխկն իմ դարդնս ա նկալ։ Տահանք խոսում չըն։ Վըեր տըեղ ըն հսնում, էտ հըրուստնեն մին հարուստ տոն ղոնաղ ըն ինգյում, էտ քյասիբն էլ մին իրփիվերի, վեց-օխտը խոնրդն խուխաստար, քյասիբ կնգան տոնը։ Էտ կնգանը տանն էլ ուտելի վըեչ մին պեն չի ինում, Ճարը կտրած, կուրկըքարերը նի յա տամ ղըղանը, տինում կրակեն յիրա, վըեր խոխեքյը գյիդան թա ղըղանումը պեն կա։ Անց ա կենում մին քանի ժամ, էտ կնեգյը ղըղանը կրական վըեր չի օնում։ Ղոնաղը տրան ասում ա.—Ղըղանեն պենն իփած կինի, վըեր կալ տո խուխոցը, ախուս ըրա, վըեր քոն ինին։ Կնեգյը թա՝ հալյա իփած չի ինիլ, կիփի իլի։ Վերչը, էրկան վըեր կենում ա, խոխեքյը քունավ ըն հնցընում, կնեգյն էլ ընդըեղ ա թողում կրակն իրիլիս, քունավ հնցընում։ Էտ ղոնաղը քյինձմ ա ղըղանը պեց անում, տըեսնում կուրկըքարերը նի տուված մաչը։ Տա ամմեն հինչ կլխու վա ին-

գյո՛մ։ Քշերեն կեսին եր ա կեննում, քյինա՛մ մին վըեխճար կյուղանում, պիրո՛մ տոն, կուրկըթարերը ղզղանան տո՛ւս տամ, վըեխճարը մորթում, մաշկում, կտորում, նի տամ ղզղանեն մաչը, կրակեն տակը տամ։ Վըեր լո՛ւսանո՛ւմ ա, խոխեքյը եր ըն կեննում, մորը եր կըցընում, թա սոված ընք, ուտելի պեն տու։ Մարն ասում ա.— Իփա՛լ չի, պատառ էլ կացեքյ, կիփի։ Մին խիլլա վըեր կենում ըն, ղոնաղն ասում ա.— Ղզղանեն եչի, կիփի կըլխե, խուխոցը հաց տո օտենւ էտ կնեգյը լի՛հա հո՛մընչիլա՛ն ղզղանը պեց ա անում, եչում, տըեսնում մասավ լիգյը։ Շատ ա ուրխանում, իփա՛ծ մսերը տո՛ւս ա տամ խուխոցն էլ տամ, ղոնաղեն էլ։ Ղոնաղը հաց ա օտում, քյինա՛մ տո՛ւս կյամ ընդըեղ, վըերդըեղ վըեր պիտի հաչի տըեռնա։ էն էրկու հարուստ մարթն էլ ըն քյեցած ինո՛ւմ, նահանց յոր չըն օնում, էտ քյասիբին էլ տըեսնում ըն, վըեր ըըուեն, հալալ, խղճըմըտանքավ մարթ ա, յոր ըն օնում, հաչի չինո՛ւմ, ետ ղարկում ո՛ւրա՛ն երգյիրը։ Վըեր հըե յըն ինո՛ւմ, թա քյինա՛ն, էտ քյասիբը էն էրկուքանուցը թա՝ պա վըեր ասում ըմ էն չոխկը ինձեռն յա ղարկած։